ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

ՀԱՍԱՆԵԼԻ ԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Սույն հետազոտությունը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Գործընկերություն և ուսուցում»/ԳՈՒՄ հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հասանելի բուհական կրթություն» ծրագրի շրջանակներում:
Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Գործընկերություն և ուսուցում» հասարակական կազմակերպությունը և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ
COMMITMENT TO CONSTRUCTIVE DIALOGUE

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄ ՀԿ
ԳՈՒՄ
PARTNERSHIP & TEACHING NGO

01.05.2019

Բովանդակություն

Աղյուսակներ և Գծապատկերներ 3
Ներածություն 5
Հետազոտության մեթոդաբանություն 7
ԲՈՒՀ-երում ուսանողների ֆինանսական աջակցության հետ կապված իրավական կարգավորումները 9
Սյունիքի մարզի ԲՈՒՀ-երում առկա հիմնախնդիրները 14
Ուսանողների ֆինանսական աջակցության հնարավորությունները. տեղեկացվածություն և թափանցիկություն 23
Եզրակացություններ 33
Առաջարկություններ 35

Աղյուսակներ և Գծապատկերներ

Աղյուսակ 1 Որքանով եք տեղյակ ֆինանսական աջակցության հնարավորություններին առնչվող օրենքների և կանոնների մասին (%) 23
Աղյուսակ 2 Ինչ սկզբունքով եք վարձավճարի փոխհատուցում ստացել (%) 24
Աղյուսակ 3 Ինչպես եք փորձել լուծել խնդիրը, ուսման վարձը վճարելու հետ կապված դժվարության դեպքում (%) 27
Աղյուսակ 4 Օգտվում եք արդյոք ԲՈՒՀ-ում գործող ֆինանսական աջակցության հետևյալ տաբերակներից (%, ըստ պատասխանի նշվածության) 27
Աղյուսակ 5 Ուսանողների մոտ աշխատանքի առկայության դրական և բացասական կողմերը ըստ ՖԽ մասնակիցների 30

Գծապատկեր 1 Ո՞ր գործոններն են նշանակալի դեր ունեցել Ձեր մասնագիտության ընտրության հարցում (%) 14
Գծապատկեր 2 Մասնագիտության նկատմամբ համակրանքը որպես գործոն, ըստ ոլորտների 15
Գծապատկեր 3 Աշխատանք ունենալու հեռանկարը որպես գործոն, ըստ ոլորտների 16
Գծապատկեր 4 Եթե ներկայումս կրկին ԲՈՒՀ ընդունվելու հնարավորություն ունենայիք, ի՞նչ ընտրություն կկատարեիք (%) 16
Գծապատկեր 5 Որքանո՞վ են արդարացվել ԲՈՒՀ-ից ունեցած Ձեր սպասումները (%) 17
Գծապատկեր 6 Որքանո՞վ է հավանական, որ ավարտելուց հետո աշխատանք կգտնեք Ձեր մասնագիտությամբ (%) 17
Գծապատկեր 7 Որքանո՞վ են Ձեզ մտահոգում Ձեր ԲՈՒՀ-ում ուսումնական գործընթացի հետ կապված հետևյալ խնդիրները (%) 18
Գծապատկեր 8 Որքանո՞վ են Ձեզ մտահոգում Ձեր ԲՈՒՀ-ում ուսումնական գործընթացի հետ կապված հետևյալ խնդիրները (%, ըստ ԲՈՒՀ-երի) 19
Գծապատկեր 9 Ի՞նչ խնդիրներով եք դիմում ԲՈՒՀ-ի աշխատակիցներին (%) 21
Գծապատկեր 10 Որքանո՞վ եք տեղյակ ֆինանսական աջակցության հնարավորություններին առնչվող օրենքների և կանոնների մասին (%, միայն լիովին տեղյակները) 23
Գծապատկեր 11 Ներկայումս որ համակարգումը եք սովորում, ըստ ֆակուլտետների (%) 24
Գծապատկեր 12 Որքա՞ն է կազմում Ձեր ուսման տարեկան վարձն առանց փոխհատուցման (%) 26
Գծապատկեր 13 ԲՈՒՀ-ում գործող ֆինանսական աջակցության և կրթաթոշակների մասին տեղեկատվության ինչ աղբյուրներից եք օգտվում, որն է առավել նախընտրելի աղբյուրը (%, ըստ պատասխանների նշվածության) 28
Գծապատկեր 14 Ինչպես կգնահատեք Ձեր սեփական առաջադիմությունն (%,ըստ սեռի) 28

Գծապատկեր 15 Որքա՞ն է կազմում Ձեր ընտանիքի միջին եկամուտը 1 ամսում բոլոր աղբյուրներից միասին 29
Գծապատկեր 16 Երբևէ եղել է, որ դժվարանաք վճարել ուսման վարձը ըստ ուսանողների տրամադրության տակ գտնվող գումարի չափի (%) 30
Գծապատկեր 17 Որքանով եք համաձայն հետևյալ դատողությունների հետ (%) 31

Հապավումներ

ԲՈՒՀ	Բարձրագույն ուսումնական հաստատություն
«ԳՈՒՄ» ՀԿ	«Գործընկերություն և ուսուցում» ՀԿ
ԳՊՀ	«Գորիսի Պետական Համալսարան» ՊՈԱԿ
ԿԳՆ	Կրթության և գիտության նախարարություն
ՄՈԳ	Միջին որակական գնահատական
ՖԽ	Ֆոկուս-խմբային քննարկում

Ներածություն

«Բյուջե՝ բոլորի համար հասանելի» ծրագիրն իրականացվում է Եվրոպական Միության աջակցությամբ, «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում, «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ի («ԳՈՒՄ» ՀԿ-ի) կողմից: Հետազոտության մեթոդաբանությունը և զեկույցը մշակել է Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնը:

Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել Սյունիքի մարզի բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթաթոշակների և ֆինանսական աջակցության քաղաքականության բարելավմանը՝ հանրային մոնիթորինգի և ջատագովության միջոցով:

Սույն ծրագրով ՀՀ Սյունիքի մարզի թվով 3 բարձրագույն կրթական հաստատություններում (Գորիսի պետական համալսարան, «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղ, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Սիսիանի մասնաճյուղ) իրականացվել է մոնիթորինգ և ուսումնասիրվել է, թե որքան թափանցիկ են շրջանառվել կրթաթոշակների և ֆինանսական աջակցության վերաբերյալ հայտարարությունները: Գործընթացն ավելի բաց և թափանցիկ դարձնելու նպատակով ծրագրի արդյունքում նաև կկազմվի կրթաթոշաների և կրթական այլ հնարավորությունների մասին հայտարարություններ ստեղծելու և դրանք հնարավորինս լայն շրջանառելու վերաբերյալ ուղեցույց և ձևանմուշներ, ինչպես նաև ընթացակարգ, որը կտրամադրվի Սյունիքի մարզի բարձրագույն ուսումնական հաստատություններին:

Սյունիքի մարզում առկա է թվով 6 բարձրագույն ուսումանական հաստատություն, որից մեկը՝ Գորիսի պետական համալսարանը, ունի անկախ բուհի կարգավիճակը, իսկ մյուսները մասնաճյուղերի կարգավիճակով են: Որպես հետազոտության թիրախ ընտրվել են այս վեց ԲՈՒՀ-երի 3-ը.

- Գորիսի Պետական Համալսարանը (ԳՊՀ),
- «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Սիսիանի մասնաճյուղը,
- «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղը:

ԳՊՀ-ն ունի 1274 ուսանող, որից՝ 1197 վճարովի հիմունքներով, 77-ը՝ անվճար: Վերջին 5 տարիների ընթացքում հալասարանանից ընդամները 7 ուսանող է մասնակցել փորձի

փոխանակման ծրագրերի: Համալսարանն օգտվում է տեղական տարբեր կրթաթոշակների հնարավորություններից, մոտ 300 ուսանող կրթաթոշակ է ստանում՝ ներառյալ պետպատվերը:

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Սիսիանի մասնաճյուղն ունի 180 ուսանող, բոլորն էլ վճարովի հիմունքներով: Վերջին 3 տարվա ընթացքում ուսման վարձը չմուծելու, ֆինանսական աջակցության հնարավորություններից չօգտվելու պատճառով համալսարանից դուրս է մնացել 77 ուսանող, ուսանողներից ոչ մեկը երբևէ փոխանակման որևէ ծրագրի չի մասնակցել, ընդհամենը 9 ուսանող է օգտվում զեղչային համակարգից:

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղում առկա ուսուցմամբ սովորում են 131 ուսանող, որոնցից 54-ը՝ անվճար, 77–ը՝ վճարովի, հեռակա ուսուցմամբ սովորում են 273 ուսանող, որոնցից 271-ը՝ վճարովի, 2-ը՝ անվճար: Վերջին 3 տարվա կտրվածքով վճարի պատճառով համալսարանից դուրս են մնացել՝ առկա ուսուցմամբ 2 ուսանող, հեռակա ուսուցմամբ 7 ուսանող: 2017-2018 ուսումնական տարում գերազանց և 90 և ավել միջին որակական գնահատական (ՄՈԳ) ունեցող 14 ուսանողների տրվել է Ռ. Էջանանցու անվան կրթաթոշակ: 2018-2019 ուսումնական տարում զեղչից օգտվում են առկա ուսուցմամբ 20 ուսանող, հեռակա՝ 55 ուսանող:

Սույն հետազոտության և ծրագրի իրականացման անհրաժեշտությունը բխում է այն մտավախությունից, որ վերոհիշյալ ուսումնական հաստատություններում կրթաթոշակների և ֆինանսական աջակցության վերաբերյալ հայտարարությունները բավարար չափով բաց և թափանցիկ չեն արվում: Չեն գործում հայտարարությունների տարածման հստակ մեխանիզմներ: Ուսանողության մի մասն իրազեկված չէ կրթաթոշակների և ֆինանսական աջակցության տեղական և միջազգային հնարավորությունների վերաբերյալ: Մարզային ուսանողները սոցիալական հնարավորությունների առումով ավելի խոցելի են, ուստի կրթական և ֆինանսական աջակցության հնարավորությունների անհասանելիությունը խոչընդոտում է բուհական կրթության մատչելիությանը: Մարզային ուսանողները սոցիալական հնարավորությունների առումով ավելի խոցելի են, ուստի կրթական և ֆինանսական աջակցության հնարավորությունների անհասանելիությունը խոչընդոտում է բուհական կրթության մատչելիությանը: Ծրագրի հիմնախնդիրն ուսումնասիելու նպատակով իրականացվել է սույն հետազոտությունը Սյունիքի մարզի թիրախային երեք ԲՈՒՀ-երում (Գորիս, Սիսիան, Կապան համայնքներում):

Հետազոտության մեթոդաբանություն

Հետազոտության նպատակը, խնդիրները

Սույն հետազոտության **նպատակն է** իրականացնել Սյունիքի մարզի բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթաթոշակների և ֆինանսական աջակցության քաղաքականության մոնիթորինգ:

Հետազոտության խնդիրներն են՝

- Ուսումնասիրել ԲՈՒՀ-երի կրթաթոշակների և ֆինանսական աջակցության տրամադրման առկա մեխանիզմները. պարզել, թե ինչ սկզբունքով է տրամադրվում ֆինանսական աջակցություն ուսանողներին:
- Պարզել ուսանողների տեղեկացվածությունը ֆինանսական աջակցության գործող մեխանիզմների մասին:
- Պարզել, թե որքանով է թափանցիկ գործում ֆինանսական աջակցության համակարգը ուսանողների համար:
- Ուսումնասիրել ուսանողների/նախկին ուսանողների տարբեր խմբերի կարծիքը ԲՈՒՀ-երում գործող ֆինանսական աջակցության համակարգերի մասին.
  - Բուհից դուրս մնացած ուսանողներ
  - Բուհերի զեղչային համակարգից օգտվող ուսանողներ
  - Բուհում անվճար համակարգում սովորող ուսանողների հետ
  - Բուհում վճարովի սովորող, բայց զեղչային համակարգից չօգտվող ուսանողներ
  - Բուհում դասավանդող դասախոսներ:

1. Քանակական հետազոտության ընտրանքը

Հետազոտության իրականացման նպատակով ընտրվել են՝

- Գորիսի Պետական Համալսարանը (207 ուսանող, 1272-ից),
- «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Սիսիանի մասնաճյուղ (32 ուսանող, 180-ից),
- «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղ (81 ուսանող, 404-ից):

Հետազոտության գլխավոր համախմբությունը կազմում է՝ 1856 ուսանող:
Հետազոտության ընտրանքը՝ 318:

Ընտրանքի ներկայացուցչականությունն ապահովելու նպատակով հարցվողներն ընտրվել են բոլոր ֆակուլտետներից և բաժիններից ԲՈՒՀ-երի կողմից նախապես տրամադրված ուսանողների թվի (ըստ բաժինների և կուրսերի) հիման վրա:

2. Տեղեկատվության ստացման մեթոդները

Հետազոտության ընթացքում տեղեկատվության ստացման նպատակով կիրառվել են հետևյալ մեթոդները.

2.1. Փաստաթղթերի վերլուծություն մեթոդ

Հետազոտության շրջանակներում իրականացվել է առկա իրավական փաստաթղթերի, ինչպես նաև ընտրված երեք բուհերի ներքին կանոնակարգերի ուսումնասիրություն՝ զեղչային համակարգի, ուսանողների ընդունելության և հեռացման, վերականգնման կարգեր և այլն: Ուսումնասիրվել են նաև վերջին 10 տարիների ընթացքում ոլորտում առկա իրավիճակի վերաբերյալ պատրաստված և հրապարակված զեկույցները, հետազոտությունները:

2.2. Քանակական հարցումներ ուսանողների հետ կիսաստանդարտացված հարցաթերթիկի միջոցով

Հետազոտության ընթացքում իրականացվել են քանակական հարցումներ երեք ԲՈՒՀ-երի 320 ուսանողի հետ պարզելու համար ուսանողների տեղեկացվածությունը և վերաբերմունքը գործող ֆինանսական աջակցության մեխանիզմների մասին:

2.3. Ֆոկուս խմբային քննարկումներ

Հետազոտության ընթացքում իրականացվել են նաև 14 ֆոկուս-խմբային քննարկում ուսանողների տարբեր խմբերի հետ՝

- Բուհից դուրս մնացած ուսանողներ
- Բուհերի զեղչային համակարգից օգտվող ուսանողներ
- Բուհում անվճար համակարգում սովորող ուսանողների հետ
- Բուհում վճարովի սովորող, բայց զեղչային համակարգից չօգտվող ուսանողներ
- Բուհում դասավանդող դասախոսներ

ԲՈՒՀ-երում ուսանողների ֆինանսական աջակցության հետ կապված իրավական կարգավորումները

Սյունիքի մարզի թիրախային ԲՈՒՀ-երում ուսանողների ֆինանսական աջակցության համակարգերի մասին ամբողջական պատկերացում կազմելու նպատակով հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են համապատասխան իրավական փաստաթղթերը, այդ թվում նաև ԲՈՒՀ-երի ներքին փաստաթղթերը.

- ԲՈՒՀ-երի կանոնադրությունը,
- Ուսանողական նպաստների և պետական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը և այլն:

Համաձայն ՀՀ սահմանադրության 39 հոդվածի «յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի ստանալու անվճար բարձրագույն և մասնագիտական կրթություն պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում՝ մրցութային հիմունքներով, օրենքով նախատեսված կարգով: Ելնելով այս սահմանադրական պահանջից, կառավարությունը ֆինանսավորում է բուհերում պետպատվերով տեղերը: Վերջին տարիների ընթացքում ՀՀ պետական և ոչ պետական ԲՈՒՀ-երում գործում է նաև ուսանողների արժանիքների վրա հիմնված կրթաթոշակների տարեկան ռոտացիոն համակարգը, որով խրախուսվում է ուսանողների ուսման առաջադիմությունը: Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին ամեն ԲՈՒՀ որոշում է բոլոր պետական բուհերում յուրաքանչյուր մասնագիտությունից պետպատվերով սովորող լավագույն առաջադիմությամբ ուսանողների այն մասնաբաժինը, ում հաջորդ ուսումնական տարում կրթաթոշակ է տրամադրվելու:

«Օրենքով սահմանված կարգով բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգի ուսանողներին և ասպիրանտներին պետական ֆինանսական օժանդակություն (կրթաթոշակներ, ուսման վարձի փոխհատուցում (լրիվ և մասնակի (զեղչ), կրթական դրամաշնորհներ, վարկեր)» տրամադրելը բարձրագույն կրթության բնագավառում պետական քաղաքականության խնդիրներից մեկն է[1]:

ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքում ամրագրվում են նաև ԲՈՒՀ-ի և պետության իրավասությունները ԲՈՒՀ-երի ֆինանսական կառավարման և ֆինանսական միջոցների տրամադրման համատեքստում:

[1] ՀՀ օրենքը բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին, ընդունված է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին, Հոդված 5, 2.6 կետ

Մասնավորապես, ԲՈՒՀ-ի իրավասություններից մեկն է ֆինանսների կառավարումը, «ներառյալ՝ աշխատավարձի, կրթաթոշակի վճարում, ուսման վարձի փոխհատուցում, ուսանողական նպաստների տրամադրում, բարձրագույն ուսումնական հաստատության պահպանմանը և զարգացմանը, գիտահետազոտական գործունեությանը նպատակաուղղված ծախսերի կատարումը» [2]. Միևնույն ժամանակ «ԲՈՒՀ-ն ինքնուրույն է որոշում իր ֆինանսական միջոցների օգտագործման ուղղությունները, ներառյալ՝ իր աշխատողների վարձատրության և նյութական խրախուսման կարգը և չափերը, սահմանում է կրթաթոշակներ»[3]:

Նույն օրենքում սահմանվում է նաև, թե ինչ է իրենից ներկայացնում ուսանողական նպաստը. **ուսանողի ուսման վարձի փոխհատուցում՝** պետական բյուջեի ֆինանսավորման, բարձրագույն ուսումնական հաստատության, հիմնադրամների և այլ կազմակերպությունների, ինչպես նաև ֆիզիկական անձանց հատկացումների հաշվին[4]:

Պետական իշխանության մարմիններն իրենց հերթին հաստատում են ֆինանսական միջոցների տրամադրման կարգի, «ներառյալ՝ ուսման վարձը փոխհատուցելու, կրթաթոշակ սահմանելու, ուսումնական վարկ ստանալու, կրթական հիմնադրամներին ֆինանսավորելու կարգերը»[5]

Բացի պետպատվերով ֆինանսավորվող տեղերից, կառավարությունը պահանջում է, որ պետական ԲՈՒՀ-երը տրամադրեն ուսման վարձի 25-75 տոկոս մասնակի զեղչեր ուսանողների ընհանուր թվի առնվազն 10 տոկոսի համար, այդ թվում, սոցիալապես ծանր պայմաններ ունեցող ուսանողներին: Իրենց կողմից սահմանված չափանիշների հիման վրա բուհերը կարող են առաջարկել նաև լրացուցիչ ամբողջական կամ մասնակի զեղչեր իրենց ուսանողներին, ի լրումն վերոհիշյալ 10 տոկոսի:

Հայաստանի կրթաթոշակային համակարգի առանձնահատկություններից մեկն այն է, որ այն առնչվում է արական սեռի ուսանողների զինվորական ծառայությանը: Նախ, բուհական ընդունելության քննություններին ամենաբարձր գնահատական ստացած ուսանողը ստանում պետական ամբողջական կրթաթոշակ և ուսման ժամանակահատվածի ընթացքում ազատվում է զինվորական ծառայությունից: Այնուհետև, ընդունելության քննություններին երկրորդ ամենաբարձր գնահատական ստացած ուսանողը բուհից ստանում է մասնակի զեղչ, սակայն

[2] ՀՀ օրենքը բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին, ընդունված է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին, Հոդված 6, 2.9 կետ
[3] Նույն տեղում՝ Հոդված 6, 3 կետ
[4] Նույն տեղում՝ Հոդված 3
[5] Նույն տեղում՝ Հոդված 21, կետ 12

առանց զինվորական ծառայության տարկետման իրավունքի:[6] Այս ուսանողների 18 տարին լրանալուն պես երկու տարով զորակոչվում են պարտադիր զինծառայության:

Կրթաթոշակային համակարգի (ուսման վարձի զեղչերի) մյուս առանձնահատկությունն էլ այն է, որ այն կապված է հարկերի հետ: Շահութահարկի և եկամտահարկի մասին օրենքների համաձայն պետական բուհերի ուսանողների ամսական վարձն ազատվում է ավելացված արժեքի հարկից (ԱԱՀ), և ուսանողների 10 տոկոսին տրամադրվող ուսման վարձի զեղչը եկամտային հարկով չի հարկվում: Ինչ վերաբերում է 10 տոկոսը գերազանցող ուսանողներին տրվող ուսման վարձի զեղչին, ապա դրանից եկամտահարկ է պահվում (քանի որ զեղչերը ուսանողների համար համարվում են հարկվող եկամուտ):

Վերջին տասնամյակում պետական ֆինանսավորման մակարդակը շարունակում է կտրուկ նվազել, պետական ԲՈՒՀ-երը ստիպված են իրենց հույսը դնել ուսման վարձերի վրա: Պետական ֆինանսավորման պակասը լրացնելու միջոցը վճարովի ուսանողների ուսման վարձն է: Չնայած ԲՈՒՀ-երը փորձում են ավելացնել ուսանողների թվաքանակը, իրենց ֆինանսական միջոցները համալրելու նպատակով, վերջին տարիներին այդ գործընթացը դանդաղ է ընթանում պայմանավորված ՀՀ ժողովրդագրական իրավիճակով, ինչպես նաև ԲՈՒՀ-երի կողմից իրականացվող կրթության ոչ բավարար որակով: Այդ մասին են վկայում նաև սույն հետազոտության արդյունքները, ըստ որոնց ուսումնասիրված ԲՈՒՀ-երի ուսանողները այլընտրանքի առկայության պարագայում կփոխեին իրենց ներկայիս ԲՈՒՀ-ը ոչ այնքան ուսման վարձը վճարելու հետ կապված դժվարություններով պայմանավորված, որքան առավել որակյալ կրթություն ստանալու նպատակով:

Հիմնականում կարիքների վրա հիմնված պետական ֆինանսավորումը և ուսման վարձից ավելի ու ավելի բարձրացող կախվածությունը սոցիալ-տնտեսապես անապահով շրջանավարտներին զրկել է բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունից: Բարձրագույն մասնագիտական կրթության ուսանողների ընդունելության ընդհանուր մակարդակի բարձրացման հետ հանդերձ, բարձրագույն կրթության հասանելիության պայմանները մնում են խիստ անհավասար: Սոցիալապես անապահով ուսանողներին ֆինանսավորման տարբերակներ տրամադրելու համար կառավարությունն արդեն երկար ժամանակ դիտարկում է պետական աջակցությամբ իրականացվող ուսանողական վարկի սխեմայի ներդրման հարցը,

[6] Karakhanyan, Susanna, 2012,"Governance of Higher Education in Armenia", in Bergan S., Egron-Polak, E., Kohler, J., Purser, L., Leadership and Governance in Higher Education: Handbook for Decision-makers and Administrators, Berlin: Raabe Academic Publishers, pp.113-129).

որը սակայն դեռևս չի ներդրվել, գործում են միայն մասնավոր ընկերությունների, վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող ուսանողական վարկեր:

Ուսանողների ֆինանսական աջակցության մեխանիզմներն ամրագրված են նաև ԲՈՒՀ-երի ներքին իրավական փաստաթղթերում: Օրինակ՝ ըստ ԳՊՀ կանոնադրության, ուսանողներն իրավունք ունեն օգտվելու ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով[7]:

Ուսանողական նպաստների և պետական կրթաթոշակների հատկացման հետ հիմնական պայմանները ամրագրված են ԲՈՒՀ-երի համապատասխան կանոնակարգերում: Մասնավորապես ԳՊՀ համապատասխան կանոնակարգում[8] ամրագրվում է, որ «ուսանողի ուսման վճարը (ուսումնառության առաջադիմության արդյունքների հիման վրա) ուսանողական նպաստի ձևով լրիվ կամ մասնակիորեն փոխհատուցվում է ՀՀ կառավարության կողմից ԳՊՀ-ին հատկացված տեղերի, համալսարանի ֆինանսական միջոցների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին: Սույն կանոնակարգում սահմանված են նաև այն խմբերը, որոնց համար ուսման վճարի լրիվ փոխհատուցում է նախատեսված.

- Մեկ ուսումնական տարվա ընթացքում սահմանված ժամկետներում հանձնված քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր գնահատական ունեցող ուսանողներին՝ մրցութային կարգով,
- Օրենքով նախատեսված, որոշակի սոցիալական խմբերում ընդգրկված անձանց (առանց ծնողական խնամքի մնացած, 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց, զոհված զինծառայողի երեխա, պարտադիր ժամկետային ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանող և այլն):

Իսկ ուսման վճարի մասնակի փոխհատուցում հատկացվում է ԿԳՆ կողմից սահմանված ուսանողի ՄՈԳ-ի նվազագույն շեմը հաղթահարած և անապահովության գնահատման համակարգումը հաշվառված խմբերին, ըստ յուրաքանչյուր տարի կառավարության կողմից սահմանվող միավորների:

ԳՊՀ-ն իր հերթին իրականացնում է ուսման վարձի մասնակի փոխհատուցում ուսանողական համակազմի առնվազն 10%-ի համար, հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը և սոցիալական խումբը, որոշակի կարգավիճակ ունեցող անձանց համար, որոնք նույնպես սահմանված են ԳՊՀ կանոնակարգում: Սույն կանոնակարգով սահմանվում է նաև ուսման

[7] «ԳՊՀ» ՊՈԱԿ-ի կանոնադրություն, 86, կետ 12
[8] ԳՊՀ ուսանողական նպաստների և պետական կրթաթոշակների հատկացման կանոնակարգ, 17.03.2016

վճարի ուսանողական նպաստի ձևով մասնակի փոխհատուցման դիմումների տրման կարգը, ինչպես նաև պետական կրթաթոշակների հատկացման կարգը:

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Սիսիանի մասնաճյուղը և «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղը առաջնորդվում են իրենց ԲՈՒՀ-երի համապատասխան կանոնակարգերով, որոնք իրենց կառուցվածքով համանման են ԳՊՀ կանոնակարգի հետ, որոշակի տարբերություններ կան միայն տարակարգերում (թե որ խմբերին պետք է հատկացնել) և զեղչման չափերում:

Հաջորդիվ անդրադարձ ենք անում, թե որքանով է թափանցիկ և հասանելի ուսանողական նպաստների և կրթաթոշակների մասին տեղեկատվությունը ուսանողների համար, որքանով է արդարացի գործում ուսանողների ֆինանսական աջակցության համակարգը թիրախային բուհերում:

Սյունիքի մարզի ԲՈՒՀ-երում առկա հիմնախնդիրները

Հետազոտության արդյունքները վկայում են այն մասին, որ ուսանողների վերաբերմունքը ԲՈՒՀ-երում գործող ֆինանսական աջակցության մեխանիզմների նկատմամբ մեծապես պայմանավորված է ինչպես ԲՈՒՀ-երում առկա հիմնախնդիրներով, այնպես էլ ուսանողների՝ կրթություն ստանալու մոտիվացիայով և մի շարք այլ գործոններով, որոնց էլ կանդրադառնանք զեկույցի այս հատվածում:

Ինչպես տեսնում ենք **Գծապատկեր 1**-ից ուսանողների համար մասնագիտության ընտրության հարցում որոշիչ դեր են ունեցել մասնագիտության նկատմամբ ունեցած համակրանքը և աշխատանք ունենալու հեռանկարը:

Գծապատկեր 1 Ո՞ր գործոններն են նշանակալի դեր ունեցել Ձեր մասնագիտության ընտրության հարցում (%)



Միևնույն ժամանակ հաշվի առնելով թիրախային ԲՈՒՀ-երում առաջարկվող մասնագիտությունների սահմանափակումները պետք է փաստել, որ ուսանողները հաճախ ընտրում են մասնագիտությունը այլընտրանքի բացակայության պայմաններում: Այս մասին են վկայում, թե՛ ուսանողների հետ անցկացված քանակական հետազոտության, թե՛ ՖԽ քննարկումների արդյունքները: Անվճար համակարգում սովորող ուսանողներից մեկն օրինակ նշել է՝

> Մանկուց երազել եմ բժիշկ դառնալ, սակայն, ինչպես առաջին դասարանում գրած շարադրության մեջ էի գրել, որ հնարավորություն չունենալու դեպքում ես կդառնամ քիմիայի և կենսաբանության ուսուցչուհի, սակայն չունեինք «Քիմիայի» բաժին և ես տվեցի «Կենսաբանություն» բաժինը: ***Ուսանող, ԳՊՀ***

Պարզելու համար, թե որքանով են փոխկապված մասնագիտության ընտրության գործոնները ուսանողների ներկայիս մասնագիտության հետ դիտարկենք ստորև ներկայացված գծապատկերները:

Գծապատկեր 2 Մասնագիտության նկատմամբ համակրանքը որպես գործոն, ըստ ոլորտների



Գծապատկեր 2-ում մենք տեսնում ենք, որ մասնագիտության նկատմամբ համակրանքը առավել նշանակալի գործոն է տարրական մանկավարժության ֆակուլտետում սովորող ուսանողների համար, իսկ հանքարդյունաբերության ոլորտի ուսանողների համար այն շատ ավելի քիչ նշանակալի գործոն է: Միևնույն ժամանակ հաջորդ գծապատկերում մենք կարող ենք տեսնել, որ աշխատանք ունենալու հեռանկարը շատ ավելի որոշիչ գործոն է հատկապես հանքարդյունաբերության և հարակից ֆակուլտետների ուսանողների համար, ինչը բնականաբար պայմանավորված է պղնձամոլիբդենային կոմբինատում աշխատանք ունենալու հեռանկարով:

Գծապատկեր 3 Աշխատանք ունենալու հեռանկարը որպես գործոն, ըստ ոլորտների



Այլընտրանքների հետ կապված սահմանափակումները ուսանողների համար պայմանավորված են ոչ միայն մասնագիտությունների, այլև ԲՈՒՀ-երի սակավությամբ և կրթության որակով: Մասնավորապես, ուսանողների գերակշռող մեծամասնությունը (79%) նշել է, որ տվյալ ԲՈՒՀ-ն ընտրել է բնակավայրին մոտ գտնվելու պատճառով: Ինչպես տեսնում ենք **Գծապատկեր 4**-ից հարցված ուսանողների ընդամենը 59% է նշել, որ կդիմեր նույն տեղը կամ նույն ԲՈՒՀ-ի այլ ֆակուլտետ:

Գծապատկեր 4 Եթե ներկայումս կրկին ԲՈՒՀ ընդունվելու հնարավորություն ունենայիք, ի՞նչ ընտրություն կկատարեիք (%)



ՖԽ արդյունքները նույնպես վկայում են այն մասին, որ ԲՈՒՀ-ի տեղակայումը ամենաորոշիչ գործոնն է եղել ԲՈՒՀ-ի ընտրության հարցում: Միևնույն ժամանակ հետազոտության

արդյունքները վկայում են այն մասին, որ ուսանողների՝ ԲՈՒՀ-ից ունեցած սպասումները հիմնականում արդարացվել են (**Գծապատկեր 5**).

Գծապատկեր 5 Որքանո՞վ են արդարացվել ԲՈՒՀ-ից ունեցած Ձեր սպասումները (%)



Չնայած այս քանակական պատկերին, որոշակի հակասություն ենք տեսնում ՖԽ արդյունքների հետ համեմատած, որտեղ ուսանողները մատնանշում են համալսարանում գույքի, լաբորատոր պայմանների, պրակտիկայի, կրթական հնարավորությունների հետ կապված մի շարք խնդիրներ, որոնք առկա են իրենց ԲՈՒՀ-ում և որոնք բացասաբար են ազդում կրթության որակի վրա: Մինչդեռ որակյալ կրթություն ստանալը ըստ հետազոտության արդյունքների, ուսանողների՝ ԲՈՒՀ-ից ունեցած ամենամեծ ակնկալիքն է (79%-ն այդպես է նշել):

Այնուամենայնիվ ուսանողները հիմնականում լավատես են ավարտելուց հետո իրենց մասնագիտությամբ աշխատանք գտնելու հարցում: Այսպես, ուսանողների 72%-ը նշել է, որ ավարտելուց հետո հավանական է, որ աշխատանք կգտնի:

Գծապատկեր 6 Որքանո՞վ է հավանական, որ ավարտելուց հետո աշխատանք կգտնեք Ձեր մասնագիտությամբ (%)



Ինչպես տեսնում ենք **Գծապատկեր 6**-ից առավել լավատեսորեն են տրամադրված հանքարդյունաբերության (90%, Կապանի ԲՈՒՀ) և տարրական մանկավարժության (89%, ԳՊՀ) ֆակուլտետներում սովորող ուսանողները, իսկ բնական գիտություններ (44%) ընտրած ուսանողները շատ ավելի քիչ հավանական են համարում, որ իրենց մասնագիտությամբ աշխատանքի կգտնեն:

Այժմ անդրադառնանք այն խնդիրներին, որոնք մտահոգում են ուսանողներին: Ստորև ներկայացված գծապատկերում (
Գծապատկեր 7) մենք տեսնում ենք, որ ուսանողներին ամենաշատը մտահոգում են մասնագիտական գրականության պակասի (55%), շենքային և գույքային վատ պայմանների (43%) հետ կապված խնդիրները, մինչդեռ սեփական կարծիքն արտահայտելու սահմանափակումները (19%), տեղական և միջազգային կրթական ծրագրերում ներգրավելու հնարավորությունների սակավությունը (17%) շատ ավելի քիչ է մտահոգում:

Գծապատկեր 7 Որքանո՞վ են Ձեզ մտահոգում Ձեր ԲՈՒՀ-ում ուսումնական գործընթացի հետ կապված հետևյալ խնդիրները (%)



Այժմ դիտարկենք ուսանողների կողմից գնահատված խնդիրներից մի քանիսն ըստ ԲՈՒՀ-երի.

Գծապատկեր 8 Որքանո՞վ են Ձեզ մտահոգում Ձեր ԲՈՒՀ-ում ուսումնական գործընթացի հետ կապված հետևյալ խնդիրները (%, ըստ ԲՈՒՀ-երի)













Ինչպես տեսնում ենք **Գծապատկեր 8**-ից նկատելի տարբերություն կա ԳՊՀ-ի և մյուս երկու ԲՈՒՀ-երի ուսանողների մոտ խնդիրների նկատմամբ ունեցած մտահոգության աստիճանի միջև: Մասնավորապես ԳՊՀ-ում ուսանողներին ավելի շատ են մտահոգում թվարկված խնդիրները քան մյուս երկու ԲՈՒՀ-երում: Հետաքրքիր է, որ միայն ուսման վարձը վճարելու և զեղչային համակարգից օգտվելու հետ կապված (բացառությամբ ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի) հարցերում է, որ ուսանողները գրեթե հավասարապես մտահոգված են նշված խնդիրներով:

ԲՈՒՀ-երում առկա մեկ այլ կարևոր խնդրի են անդրադարձել ՖԽ քննարկման մասնակիցները: Մասնավորապես ԳՊՀ ուսանողների մի մասը գտնում է որ ռոտացիոն համակարգը արդարացի կերպով չի գործում և առկա է կողմնակալություն:

> Դա ավելի շատ կախված է անհատից՝ ով է քո դասախոսը: Դասախոս կա, որ գալիս ու սկզբից հարցնում է՝ ովքեր են անվճար ու հետո քննական առարկաների գնահատման ժամանակ գնահատում է այնպես, ինչպես որ ցանկալի է, որ փոփոխություն չլինի: Բայց դա բոլոր դասախոսների պարագայում չէ, այլ մի քանիսի: Բայց խնդիրը հենց դրանից կարող է լինել: Քննական առարկաների դասախոսներից կարող է լինել անարդարություն: **Ուսանող, ԳՊՀ**

Բոլորովին այլ կարծիք ունեն ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի ուսանողները, որոնք կարծում են ռոտացիոն համակարգը և ուսանողների անցումը վճարովի համակարգից անվճարի արդար է գործում: Կարծիքների այս տարբերությունը թերևս պայմանավորված է ֆինանսական աջակցության հնարավորությունների տարբերությամբ Գորիսում և Կապանում. Կապանում այդպիսի հնարավորությունները համեմատաբար ավելի շատ են և ուսանողները օգտվում են ինչպես ԲՈՒՀ-ի կողմից հատկացվող ֆինանսական աջակցությունից, այնպես էլ պղնձամոլիբդենային կոմբինատի և այլն: Մինչդեռ Գորիսում ՖԽ քննարկմանը մասնակցած ուսանողներից մեկն օրինակ նշել է, որ հավասար առաջադիմություն ունեցող ուսանողների մի մասն օգտվում է զեղչից կամ կրթաթոշակից, իսկ մի մասը՝ ոչ.

> Անցյալ տարի կրթաթոշակ էին տվել այն ուսանողներին, որոնց ՄՈԳ-ը 90-ից բարձր էր, բայց մեր կուրսում 6 ուսանող կար, որ հանգիստ կարող էր ստանալ այդ կրթաթոշակը, բայց չգիտես ինչու չստացավ: **Ուսանող, ԳՊՀ**

Ուսանողների կողմից մատնանշված մեկ այլ խնդիր է կարգապահական խնդիրների, դասախոսների հետ վիճելու, կամ քննությունը չստանալու պատճառով զեղչից զրկվելը.

> Օրինակ, ես, պիտի օգտվեմ, չեմ օգտվում: Մարտական հերթապահություն եմ անցել, բայց չեմ զեղչվում: Չստացած քննություն ունեմ, դրա համար չեմ օգտվում, բայց իմ պատճառով չի եղել, որ չեմ ստացել: **ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղի ուսանող**

ԲՈՒՀ-ում առկա, կրթական գործընթացի հետ կապված և անձնական խնդիրներով ԲՈՒՀ-ի աշխատակիցներին դիմել է հարցված ուսանողների ընդամենը 23%-ը: Հարցվածների 45%-ը նշել է, որ չի դիմել քանի որ մտահոգող խնդիրներ չի ունեցել, իսկ 29%-ը նշել է, որ ինքնուրույն է փորձել լուծում գտնել: Հատկանշական է, որ ԲՈՒՀ-երի աշխատակիցներին դիմել են նախ և առաջ զեղչային համակարգի, վարձավճարների նվազեցման կամ հետաձգման, կրթաթոշակներից օգտվելու հետ կապված խնդիրներով (44%), մյուս խնդիրները վերաբերում են կրթական գործընթացի կազմակերպմանը, դասացուցակների փոփոխությանը և այլն:

Հետաքրքիր է, որ թե՛ կրթական, թե՛ վարձավճարի հետ կապված խնդիրներով դիմում են հիմնականում վճարովի և վարձավճարի մասնակի փոխհատուցմամբ սովորող ուսանողները, իսկ անվճար համակարգումը սովորողների շատ փոքր մասն է դիմում որևէ խնդրով (Գծապատկեր 9): Ինչպես տեսնում ենք գծապատկերից վարձավճարի հետ կապված ընթացիկ խնդիրներով փոքր ինչ ավելի շատ դիմումներ են ներկայացրել վարձավճարի մասնակի փոխհատուցմամբ սովորող ուսանողները: ՖԽ քննարկումների մասնակիցների մի մասի կարծիքով վարձավճարի հետ կապված սեփական իրավունքների մասին տեղեկացվածությունը և համառությունը կարող են դրական արդյունքի բերել և ուսման վճարի չափը հնարավոր է որոշ չափով նվազեցնել:

Գծապատկեր 9 Ի՞նչ խնդիրներով եք դիմում ԲՈՒՀ-ի աշխատակիցներին (%)



Ուսանողները նախ և առաջ հակված են դիմել դեկանատի աշխատակիցներին (41%), այնուհետև դեկանին (30%) և դասախոսներից որևէ մեկին (20%): Իսկ անձնապես ռեկտորին, պրոռեկտորին կամ ուսանողական խորհուրդին շատ քչերն են դիմում ներկայացրել:

Ուսանողների ընդամենը 18%-ն է նշել, որ գրավոր է ներկայացրել իր դիմումը, իսկ 59%-ը բանավոր է ներկայացրել: Այն դեպքում երբ ԲՈՒՀ-երում գործում է հատուկ կարգ ըստ որի ուսանողները կարող են գրավոր դիմել իրենց մտահոգող խնդիրներով և սահմանված ժամկետներում պատասխան ստանալ: Սա վկայում է այն մասին, որ ուսանողները հիմնականում տեղեկացված չեն իրենց իրավունքների մասին կամ չեն կարծում, որ իրենց խնդիրը լուծում կստանա: Այսպես, այս կամ այն խնդրով դիմում ներկայացրած ուսանողների 61%-ը նշել է, որ օրինակ վարձավճարի հետ կապված դիմում ներկայացնելուց հետո տեղյակ չէ, թե ինչ ընթացք է ստացել խնդրի լուծումը:

Ուսանողների ֆինանսական աջակցության հնարավորությունները. տեղեկացվածություն և թափանցիկություն

Հետազոտության արդյունքները վկայում են այն մասին, որ ուսանողների կեսից ավելին բոլորովին տեղյակ չէ ուսանողական նպաստներին առնչվող ՀՀ օրենսդրության, ԲՈՒՀ-ի կողմից սահմանված համապատասխան կարգի կամ ԲՈՒՀ-ի կանոնադրության մասին: Մասնավորապես ընդամենը 8%-ն է նշել, որ լիովին ծանոթ է համապատասխան ՀՀ օրենսդրությանը, 10%-ը ծանոթ է ԲՈՒՀ-ում գործող կարգին և 11%-ը կանոնադրությանը:

Աղյուսակ 1 Որքանով եք տեղյակ ֆինանսական աջակցության հնարավորություններին առնչվող օրենքների և կանոնների մասին (%)

	Բոլորովին տեղյակ չեմ	Որոշ չափով տեղյակ եմ	Լիովին տեղյակ եմ
Ուսանողական նպաստների և կրթաթոշակներին առնչվող ՀՀ օրենսդրության	55	37	8
ԲՈՒՀ-ի կողմից կրթաթոշակների վերաբերյալ սահմանված կարգի մասին	59	31	10
ԲՈՒՀ-ի կանոնադրության մասին	53	37	11

Հատկանշական է, որ թվարկված օրենքներից (կարգերից) առավել տեղեկացված են անվճար և վարձավճարի մասնակի փոխհատուցմամբ սովորող ուսանողները, քան վճարովի համակարգում սովորողները (**Գծապատկեր 10**):

Գծապատկեր 10 Որքանո՞վ եք տեղյակ ֆինանսական աջակցության հնարավորություններին առնչվող օրենքների և կանոնների մասին (%, միայն լիովին տեղյակները)



Հետազոտության մասնակիցների **65%-ը սովորում է վճարովի համակարգումը, 28%-ը վարձավճարի մասնակի փոխհատուցմամբ, իսկ 7%-ն անվճար համակարգում**:

Հետազոտության մասնակիցների բաշխումն ըստ հիմնական ֆակուլտետների և ուսուցման համակարգի (անվճար, վճարովի) տեսնում ենք **Գծապատկեր 11**-ում:

Գծապատկեր 11 Ներկայումս որ համակարգումը եք սովորում, ըստ ֆակուլտետների (%)



Ինչպես տեսնում ենք գծապատկերից հանքարդյունաբերության ոլորտը գտնվում է շահագրգիռ կողմերի (կառավարություն, պղնձամոլիբդենային կոմբինատ) հոգածության տիրույթում: Թերևս դրանով է պայմանավորված անվճար տեղերի փոքր ինչ ավելի բարձր թիվը քան մյուս ֆակուլտետներում: Միևնույն ժամանակ մենք տեսնում ենք, որ այդ ոլորտի ուսանողներն ավելի շատ են ուսման վարձի փոխհատուցում ստացել, քան մյուս ֆակուլտետներում: Հակառակ պատկերն ենք տեսնում կառավարման և տնտեսագիտության ֆակուլտետներում սովորող ուսանողների մոտ: Մասնավորապես կառավարման ֆակուլտետում սովորող ուսանողների 74%-ը սովորում է վճարովի համակարգում, այն դեպքում երբ հանքարդյունաբերության ֆակուլտետում սովորողների 35%-ն է վճարովի համակարգում սովորում:

Հարցմանը մասնակցած անվճար և մասնակի փոխհատուցմամբ սովորող ուսանողները նշել են, թե ինչ սկզբունքով են փոխհատուցում ստացել (**Աղյուսակ 2**):

Աղյուսակ 2 Ինչ սկզբունքով եք վարձավճարի փոխհատուցում ստացել (%)

Փոխհատուցման սզբունք	%
Միակողմանի ծնողազուրկ, միայնակ մայր	19
Մարտական հերթապահություն իրականացնող	13
Ընդունելության քննության բարձր ցուցանիշներ	12
Զոհված ազատամարտիկի զավակ	9
Ապրիլյան պատերազմի մասնակից	9

Փոխհատուցման սզբունք	%
Անչափահաս երեխաներ ունեցող ուսանող	8
Առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամ	7
Սոցիալապես անապահով, նպաստառու	5
ԲՈՒՀ-ի աշխատակցի երեխա	5
Ուսման ընթացքում ցուցաբերած բարձր առաջադիմության արդյունքում	4
Վարկային կազմակերպությունն է ֆինանսավորում	3
Ծնողներից մեկի, կամ երկուսի հաշմանդամություն	2
Ընտանիքում երկուսից ավելի ուսանող	1
Ընտակենան պայմաններ, ամուսնալուծություն	1
Միջազգային կազմակերպությունն է ֆինանսավորում	1
Բազամազավակ ընտանիքի երեխա	1

Ինչպես տեսնում ենք աղյուսակից առաջին տեղում միակողմանի ծնողազրկության սկզբունքն է: Թե՛ ֆոկուս խմբային քննարկման և թե՛ քանակական հարցումների մասնակիցները նշում են, որ այնուամենայնիվ ճանաչում են ուսանողների, որոնք իրավունք ունեն նպաստ ստանալու սակայն չեն ստանում: Այսպես հարցման մասնակիցների 5%-ը նշում է, որ ճանաչում է նման ուսանողների, որոնք ՀՀ օրենսդրությամբ և ԲՈՒՀ- համապատասխան կարգի համաձայն իրավունք ունեն ամբողջական կամ մասնակի փոխհատուցում ստանալու, սակայն չեն ստանում տարբեր պատճառներով (կարգապահական խնդիրներ ունենալու, բացակայությունների, ոչ բավարար առաջադիմության, ապրիլյան պատերազմի մասնակից է, սակայն փաստաթղթերն ուշ է ներկայացրել և այլն):

> Մեր կուրսում կա մի աղջիկ, որը բակալավրի առաջին կուրսից մինչև մագիստրատուրայի վերջ գերազանցիկ շարունակում է, այսինքն՝ նա նույնիսկ կարմիր դիպլոմ ստացել է, բայց զուտ տեղի պատճառով, որ երկու հոգի պիտի լինեն, եղել են դեպքեր, երբ նույնիսկ հետազոտական աշխատանքներ ենք գրում որակային առումով նրա աշխատանքը ավելի բարձր է եղել, քան մյուս անվճարինը, բայց այնպես է ստացվել, որ նա շարունակել է մնալ վճարովի համակարգում, մյուսը՝ անվճար, որովհետև սկզբից, սովորության համաձայն, մյուսը անվճար պիտի լինի:
>
> **Ուսանող, ԳՊՀ**

ՖԽ քննարկումներին մասնակցած ուսանողների մի մասը գտնում է, որ առկա են նաև տեխնիկական բնույթի խնդիրներ, որոնք ազդում են գնահատականի վրա որն էլ իր հերթին թույլ չի տալիս անցնել զեղչային համակարգի: Մասնավորապես կամ դասախոսը, կամ օպերատորը

սխալ են պատահաբար մուտքագրում գնահատականը և անգամ ապացուցելուց հետո որ այն բարձր է չեն փոխում:

Հետազոտությանը մասնակցած վճարովի համակարգում սովորող ուսանողների տարեկան ուսման վճարը (առանց փոխհատուցման) ըստ միջակայքերի ներկայացված է ստորև:

Գծապատկեր 12 Որքա՞ն է կազմում Ձեր ուսման տարեկան վարձն առանց փոխհատուցման (%)



Պատկերացնելու համար, թե որքանով է նշանակալի տարբերությունը վճարովի համակարգում սովորող ուսանողների ուսման վարձի և մասնակի փոխհատուցմամբ սովորողներինը դիտարկենք ուսման միջին վարձավճարը մեկ ուսանողի համար: Այսպես, հետազոտությանը մասնակցած ուսանողների միջին տարեկան վարձավճարը[9] կազմում է 292,000 ՀՀ դրամ, իսկ մասնակի փոխհատուցմամբ սովորող ուսանողինը՝ 154,000 ՀՀ դրամ: Ստացվում է, որ միջինում **մասնակի փոխհատուցմամբ սովորող ուսանողները 47%-ով ավելի քիչ են վճարում** քան, ամբողջական վճարովի համակարգում սովորողները: Մասնակի փոխհատուցմամբ սովորող ուսանողների 31%-ի ուսման վարձի մինչև 40%-ն է փոխհատուցվում, 51%-ի մոտ՝ 41-60%-ն է փոխհատուցվում և ընդամենը 18%-ի մոտ է 61-100% փոխհատուցվում, հարցման մասնակիցներից միայն հինգի վարձավճարն է ամբողջությամբ փոխհատուցվում:

Վճարովի համակարգում սովող ուսանողների 27%-ը նշել է, որ ուսման վարձը վճարելու հետ կապված խնդիր ունեցել է: Ինչպես տեսնում ենք **Աղյուսակ 3**-ից որպես տվյալ խնդրի լուծման առավել հաճախակի կիրառվող տարբերակ ուսանողներն ընտրել են մասնակի վճարման և ճամկետի հետաձգման տարբերակը, իսկ ուսանողների 5%-ը դեռևս չի լուծել խնդիրը:

[9] Տվյալ դեպքում միջին վարձավճարը ոչ թե կիրառվում է որպես ճշգրիտ վիճակագրական գործիք, այլ պարզապես հետազոտության արդյունքները տեսանելի դարձնելու համար:

Աղյուսակ 3 Ինչպես եք փորձել լուծել խնդիրը, ուսման վարձը վճարելու հետ կապված դժվարության դեպքում (%)

Խնդրի լուծման տարբերակներ	%
Մասնակի վճարում եմ կատարել և խնդրել ժամանակ հատկացնել	26
Դիմել եմ ԲՈՒՀ-ի տնօրինությանը, որպեսզի ժամանակ հատկացնեն վճարում կատարելու համար	21
Ծնողներս փոխառություն են վերցրել ծանոթներից, բարեկամներից	17
Ծնողներս սպառողական վարկ են վերցրել ֆինանսական հաստատությունից	12
Ուսանողական վարկ եմ վերցրել	11
Դեռ չեմ լուծել	5
Սպառողական, ոչ ուսանողական վարկ եմ վերցրել	4
Պարտքով գումար եմ վերցրել	2
Կոմբինատն է վճարել	1

Հարցված ուսանողները նշել են նաև, թե ԲՈՒՀ-ի կողմից ընձեռնված ֆինանսական աջակցության ինչ հնարավորություններից են օգտվում.

Աղյուսակ 4 Օգտվում եք արդյոք ԲՈՒՀ-ում գործող ֆինանսական աջակցության հետևյալ տարբերակներից (%, ըստ պատասխանի նշվածության)

Ֆինանսական աջակցության տարբերակներ	Օգտվում եմ %
ԲՈՒՀ-ի կողմից տրամադրվող ծառայություններից օգտվելու զեղչային համակարգերից (հանգստի կազմակերպում և այլն)	13
Ուսման վարձավճարի մասնակի, կամ ամբողջական փոխհատուցում մասնավոր ընկերության, գործատուի կողմից	7
Կրթաթոշակ (ներառյալ անվանական)	6
Ուսման վարձավճարի ամբողջական փոխհատուցում ուսանողական նպաստի ձևով	3
Ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում ուսանողական նպաստի ձևով	3
Ուսման վարձավճարի ամբողջական փոխհատուցում ՊՆ կողմից	2
Ուսման վարձավճարի մասնակի կամ ամբողջական փոխհատուցում բարերարի կողմից	1

Ինչպես տեսնում ենք առավել հաճախ ուսանողներն օգտվում են ԲՈՒՀ-ում գործող զեղչային համակարգերի տարբեր տեսակներից (հանգստի կազմակերպում, միջոցառումներ և այլն): Սակայն ընդամենը հարցվողների ընդամենը 13%-ն է այդպես նշել:

Որպես ԲՈՒՀ-ում գործող ֆինանսական աջակցության և կրթաթոշակների մասին տեղեկատվության ստացման աղբյուր ուսանողները դիմում են դեկանատի աշխատակիցներին (67%), իսկ ամենահազվադեպը օգտվում են ԲՈՒՀ-ում փակցված հայտարարություններից,

դրանց բացակայության պատճառով, կամ պարզապես ուշադրություն չեն դարձնում (**Գծապատկեր 13**):

Գծապատկեր 13 ԲՈՒՀ-ում գործող ֆինանսական աջակցության և կրթաթոշակների մասին տեղեկատվության ինչ աղբյուրներից եք օգտվում, որն է առավել նախընտրելի աղբյուրը (%, ըստ պատասխանների նշվածության)



Հարցված ուսանողների ընդամենը 14%-ն է երբևէ դիմել ֆինանսական աջակցության մեխանիզմների մասին տեղեկատվություն ստանալու նպատակով: Իսկ դիմումների 80% դեպքերում ամբողջական տեղեկատվություն է ստացել: Ընդ որում տղաների ընդամենը 5%-ն է նմանատիպ հարցով դիմել, իսկ աղջիկների 23%-ը: Սա պայմանավորված է երկու հիմնական հանգամանքով.

1. Տղաները ֆինանսական որոշակի անկախություն ունեն և կարողանում են գումար վաստակել, հետևապես ավելի քիչ ֆինանսական դժվարությունների են հանդիպում,
2. Տղաների առաջադիմությունն ավելի ցածր է, քան աղջիկներինը, իսկ սա հաճախ որոշիչ գործոն է հանդիսանում ուսանողական նպաստ կամ կրթաթոշակ ստանալու հարցում:

Ստորև ներկայացված գծապատկերում մենք տեսնում ենք տղաների և աղջիկների առաջադիմությունը սեփական գնահատականի համաձայն:

Գծապատկեր 14 Ինչպես կգնահատեք Ձեր սեփական առաջադիմությունն (%,ըստ սեռի)



Ընտանիքի ֆինանսական վիճակը, ուսման վրա իրականացվող ծախսերը և ուսանողների ֆինանսական անկախությունը նույնպես էական նշանակություն ունեն ԲՈՒՀ-ի ֆինանսական աջակցության մեխանիզմներից օգտվելու համատեքստում: Ակնհայտ է, որ որքան ավելի բարձր եկամուտ ունի ընտանիքը այնքան ավելի քիչ հավանական է, որ ուսանողը կդիմի ֆինանսական աջակցություն ստանալու նպատակով:

Գծապատկեր 15 Որքա՞ն է կազմում Ձեր ընտանիքի միջին եկամուտը 1 ամսում բոլոր աղբյուրներից միասին



Գծապատկեր 15-ում մենք տեսնում ենք ուսանողների բաշխումն ըստ ընտանիքի միջին ամսեկան եկամուտների, որտեղ ուսանողների 45%-ի ընտանիքներում միջին ամսեկան եկամուտն մինչև 150,000 ՀՀ դրամ է:

Հետաքրքիր է, որ առավել բարձր առաջադիմություն ցույց են տալիս այն ուսանողները, որոնց ընտանիքների միջին ամսեկան եկամուտներն առավել ցածր է: Այսպես, եթե մինչև 150,000 ՀՀ դրամ եկամուտ ունեցողների խմբում ուսանողների 12%-ն է գերազանցիկ, մյուս երկու խմբերում համապատասխանաբար 6% և 7%-ը:

Մինչև 150,000 ՀՀ դրամ եկամուտ ունեցող ընտանիքներում ուսանողների 54%-ն է սովորում վճարովի համակարգում, իսկ 250,000 ՀՀ դրամ և ավելի եկամուտ ունեցողների խմբում՝ ուսանողների 72%-ն է սովորում վճարովի համակարգումը: Սա կրկին վկայում է այն մասին, որ ընտանիքի ֆինանսական կայունությունը էական նշանակություն ունի երիտասարդի կրթական հնարավորությունների հարցում և ֆինանսական միջոցների բացակայությունը լուրջ խոչընդոտ է հանդիսանում կրթություն ստանալու համար:

Ուսանողների 41%-ը նշել է, որ ամսվա ընթացքում իրենց տրամադրության տակ գտնվում է մինչև 20,000 ՀՀ դրամ, 28%-ը՝ 20,001-45,000 ՀՀ դրամ, 20%-ը՝ 45,001-100,000 ՀՀ դրամ և ընդամենը 11%-ն է նշել որ իր ենթակայության տակ ամսվա ընթացքում 100,000 ՀՀ դրամից ավելի է լինում:

Ընդ որում միջինում ուսման հետ կապված ծախսերը մեկ ամսվա ընթացքում կազմում են ընդամենը 5,000-10,000 ՀՀ դրամ:

Հետազոտության հետաքրքիր բացահայտումներից (պարադոքսներից) մեկն այն է, որ **որքան ավելի քիչ է ուսանողների տրամադրության տակ գտնվող գումարը, այնքան ավելի քիչ են նրանք դժվարանում վճարել ուսման վարձը և հակառակը:** Այդ մասին են վկայում **Գծապատկեր 16**-ում ներկայացված արդյունքները, որտեղ տեսնում ենք, որ օրինակ այն ուսանողները, որոնք իրենց տրամադրության տակ ունեն ամսեկան 20,000-45,000 ՀՀ դրամ ավելի քիչ են դժվարանում վճարել ուսման վարձը (ընդամենը 16%-ն է այդպես նշել), քան 100,000 և ավելի եկամուտ ունեցողները (36%):

Գծապատկեր 16 Երբևէ եղել է, որ դժվարանաք վճարել ուսման վարձը ըստ ուսանողների տրամադրության տակ գտնվող գումարի չափի (%)



Որպես ուսանողների «գրպանի գումարի» ձևավորման հիմնական աղբյուր առաջին տեղում նշվել է վարձատրվող հիմնական աշխատանքը (48%), երկրորդը՝ ծնողների և հարազատների կողմից տրամադրվող գումարն է (43%), իսկ երրորդը վարձատվող ոչ հիմնական աշխատանքը (12%): Ուսանողների մոտ աշխատանքի առկայությունը, սակայն ՖԽ քննարկումների մասնակիցների կարծիքով ունի թե՛ դրական, թե՛ բացասական կողմեր, որոնք ներկայացված են ստորև.

Աղյուսակ 5 Ուսանողների մոտ աշխատանքի առկայության դրական և բացասական կողմերը ըստ ՖԽ մասնակիցների

Դրական կողմեր	Բացասական կողմեր
Ֆինանսական անկախություն	Բացակայություն դասերից
Ուսման վարձը վճարելու հնարավորություն	Ուսում պարզապես վկայական ստանալու նպատակով
Աջակցություն ընտանիքին	Կրթություն ստանալու մոտիվացիայի նվազում
Սեփական ճակատագիրը որոշելու ինքնուրույնություն	

Ուսանողների պասիվության և կրթական տարբեր գործընթացներում մասնակցության ցածր ցուցանիշի մասին են վկայում նաև հետազոտության արդյունքները: Մասնավորապես հարցված

ուսանողների 84%-ը նշել է, որ որևէ ուսանողների հասարակական ակտիվության ձևերից և ոչ մեկին չի մասնակցում (ուսանողական խորհուրդի, հանրօգուտ աշխատանքի, մասնակցություն մրցույթներին և այլն): Մինչդեռ համաձայն ԲՈՒՀ-երում գործող ուսանողական նպաստների և կրթաթոշակների տրամադրման կարգի հասարակական ակտիվությունը նույնպես կարող է ֆինանսապես խրախուսվել ԲՈՒՀ-ի ղեկավարության կողմից:

Ամփոփելով կարող ենք փաստել, որ չնայած նրան, որ ուսանողների ֆինանսական աջակցության մեխանիզմները հիմնականում թափանցիկ են և հասանելի են բոլոր ուսանողների համար, ցածր է ուսանողների մոտիվացիան կրթություն ստանալ և հետևապես նաև դրան ուղղված ջանքեր գործադրելու հետ կապված: Ստորև ներկայացված են մի շարք դատողությունների նկատմամբ ուսանողների գնահատականները, որոնք վերաբերում են ֆինանսական աջակցության մեխանիզմների թափանցիկությանը և արդարացիությանը:

Գծապատկեր 17 Որքանով եք համաձայն հետևյալ դատողությունների հետ (%)



Ինչպես տեսնում ենք գծապատկերից ուսանողների 85%-ը գտնում է, որ ֆինանսական աջակցության գործող մեխանիզմների մասին, բոլոր ուսանողները հավասարապես իրազեկվում

են, իսկ 94%-ը նշել են, որ բոլոր ուսանողները հավասար հնարավորություն ունեն օգտվելու այդ հնարավորություններից, միայն 25%-ն է նշել, որ ուսանողական նպաստ ստացողների անունները չեն հրապարակվում:

Ընդհանուր առմամբ թե՛ քանակական և թե՛ ՖԽ քննարկման արդյունքները վկայում են այն մասին, որ ուսման վարձը չվճարելու պատճառով ԲՈՒՀ-ից դուրս մնացածների թիվը չափազանց փոքր է: Դուրս մնալու հիմնական պատճառներ են հանդիսանում բացակայությունները, քննությունները չհանձնելը, աշխատանքի հետ անհամատեղելիությունը և այլն: Մյուս կողմից սա լրացուցիչ վկայություն է այն մասին, որ անհրաժեշտ է աշխատանքներ տանել կրթության որակի բարձրացման և Սյունիքի մարզի ԲՈՒՀ-երում աշխատաշուկայում պահանջարկ վայելող մասնագիտությունների ավելացման ուղղությամբ:

Եզրակացություններ

1. Հետազոտության արդյունքների համաձայն Սյունիքի մարզի ԲՈՒՀ-երում գործող ֆինանսական աջակցության մեխանիզմները թափանցիկ են: Ամբողջ տեղեկատվությունը տեղադրվում է կայքէջում, փակցվում է ԲՈՒՀ-ի ներսում տեսանելի վայրում: Միևնույն ժամանակ ուսանողները կարող են դիմել դեկանատ և ստանալ անհրաժեշտ տեղեկատվությունը:
2. Կանոնավոր գործում է միայն ԳՊՀ կայքէջը, որտեղ տեղադրված է նաև ուսանողական նպաստների տրամադրման կարգը և «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Սիսիանի մասնաճյուղը կայքէջը, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղը չի գործում:
3. Որպես ԲՈՒՀ-ում գործող ֆինանսական աջակցության և կրթաթոշակների մասին տեղեկատվության ստացման աղբյուր ուսանողները դիմում են դեկանատի աշխատակիցներին (67%):
4. Ուսանողների կրթություն ստանալու մոտիվացիան ցածր է, ինչը պայմանավորված է մի շարք գործոններով.
   - Նախընտրելի մասնագիտության բացակայություն մարզում գործող ԲՈՒՀ-երում,
   - Ուսմանը զուգահեռ աշխատելու անհրաժեշտություն,
   - Մասնագիտությամբ աշխատանք գտնելու դժվարություն,
   - Կրթության ցածր որակ. մասնագիտական առարկաների սակավություն, պրակտիկայի ոչ պատշաճ կազմակերպում, մասնագիտական գրականության պակաս, դասախոսների պատրաստվածություն և այլն:
5. ԲՈՒՀ-երում սովորում են սակավաթիվ ուսանողներ, որոնք ըստ գործող կարգի իրավունք ունեն ուսանողական նպաստից և զեղչերից օգտվելու, սակայն չեն օգտվում կարգապահական խնդիրների, բացակայությունների, դիմումը ուշ ներկայացնելու պատճառով: Անհրաժեշտ է ժամանակին բացահայտել նման դեպքերը և համապատասխան աջակցություն ցույց տալ:
6. Միևնույն ժամանակ ուսանողները նշել են զեղչերի տրամադրման համակարգի հետ կապված հետևյալ խնդիրներ.
   - Դասախոսների մի մասը կողմնակալ վերաբերմունք է ցույց տալիս և բարձր գնահատական կարող է դնել ի սկզբանե անվճար համակարգ ընդունված ուսանողին,
   - Հավասար առաջադիմություն ունեցող երկու ուսանողներից մեկը հնարավորություն չունի զեղչից օգտվելու ֆինանսավորման պակասի կամ հատկացված տեղերի սահմանափակության պատճառով:

7. Ուսանողների գերակշռող մեծամասնությունը (79%) նշել է, որ տվյալ ԲՈՒՀ-ն ընտրել է բնակավայրին մոտ գտնվելու պատճառով: Եվ ընդամենը 59% է նշել, որ կդիմեր նույն տեղը կամ նույն ԲՈՒՀ-ի այլ ֆակուլտետ: Անհրաժեշտ է բարձրացնել ուսանողների շահագրգռվածությունը Սյունիքի մարզի ԲՈՒՀ-եր ընդունվելու նկատմամբ: Այդ նպատակով ԲՈՒՀ-ը պետք է սերտորեն համագործակցի մասնավոր հատվածի հետ այլընտրանքային ֆինանսավորման հնարավորություն ստեղծելով այն ուսանողների համար, որոնք ցանկություն ունեն ուսում ստանալու , սակայն չեն ստանում:
8. Մարզում առկա է հետևյալ պարադոքսալ խնդիրը. մարզը ունի թե որակյալ ուսուցիչների, թե պոլնձամոլիբդենային կոմբինատում աշխատող որակյալ մասնագետների կարիք: Սակայն փաստն այն է, որ առկա ռեսուրսները (Սյունիքի մարզի ԲՈՒՀ-երի շրջանավարտները) չեն բավականացնում կամ համապատասխան պարաստվածություն չունեն: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել մարզի համար անհրաժեշտ մասնագիտությունների գծով կրթության որակի բարելավմանը: Միևնույն ժամանակ պետք է դիվերսիֆիկացնել և ավելացնել նոր աշխատաշուկայում պահանջարկ վայելող և ուսանողների համար նախընտրելի մասնագիտություններ:
9. Ուսանողների կրթական հնարավորությունները Սյունիքի մարզի ԲՈՒՀ-երում սահմանափակ են: Մասնավորապես, ուսանողները գրեթե չեն մասնակցում միջազգային փոխանակման ծրագրերի, դասընթացների, սեմինարների: Միևնույն ժամանակ ցուցաբերում են ցածր հասարակական ակտիվություն:
10. Թե՛ կրթական, թե՛ վարձավճարի հետ կապված խնդիրներով ԲՈՒՀ- ղեկավարությանը դիմում են հիմնականում վճարովի և վարձավճարի մասնակի փոխհատուցմամբ սովորող ուսանողները, իսկ անվճար համակարգումը սովորողների շատ փոքր մասն է դիմում որևէ խնդրով:
11. Որքան ավելի քիչ է ուսանողների տրամադրության տակ գտնվող գումարը, այնքան ավելի քիչ են նրանք դժվարանում վճարել ուսման վարձը և հակառակը: Անհրաժեշտ է բարձրացնել ուսանողների ֆինանսական գրագիտության մակարդակը, մասնավորապես ֆինանսների տնօրինման հարցում: Այդ դեպքում հնարավոր է մի փոքր նվազեցնել ԲՈՒՀ-երի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությունից օգտվելու անհրաժեշտությունը և խնայված միջոցներն ուղղել առավել կարիք ունեցող ուսանողներին:
12. Ուսանողների 85%-ը գտնում է, որ ֆինանսական աջակցության գործող մեխանիզմների մասին, բոլոր ուսանողները հավասարապես իրազեկվում են, իսկ 94%-ը նշել են, որ բոլոր ուսանողները հավասար հնարավորություն ունեն օգտվելու այդ հնարավորություններից, միայն 25%-ն է նշել, որ ուսանողական նպաստ ստացողների անունները չեն հրապարակվում:

Առաջարկություններ

Ամփոփելով հետազոտության արդյունքները ներկայացնենք հետազոտությանը մասնակցած ուսանողների, դասախոսների և փորձագետի առաջարկություններն ուղղված ըստ բացահայտված հիմնախնդիրների.

1. **Ուսանողների մոտ կրթություն ստանալու ցածր մոտիվացիա.**
   - Ստեղծել և ամրապնդել ԲՈՒՀ-գործատու կապը, ներգրավելով գործատուներին ուսումնական գործընթացում, ինչպես նաև ստեղծելով հիմքեր, որպեսզի ներկայիս ուսանողը երաշխավորված աշխատանք ունենա ավարտելուց հետո,
   - Անհրաժեշտ է բարելավել ԲՈՒՀ-երի նյութատեխնիկական պայմանները,
   - Անհրաժեշտ է պայմաններ ստեղծել որակյալ դասախոսական կազմ ներգրավելու նպատակով,
   - Պետք է զարգացնել մարզային և հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների միջև համագործակցությունը,
   - Իրականացնել ոչ ֆորմալ դասընթացներ հաստատությունում և հաստատությունից դուրս,
   - Ուսանողներին ներգրավել համայնքային կամավորական աշխատանքներին:
   - Պետք է ամրապնդել ՔՀԿ-ՏԻՄ-Բիզնես-ԲՈՒՀ կապը, մշակելով համագործակցության ռազմավարություն և այնպես անել, որ համագործակցությունը լինի փոխշահավետ, հետևապես երկարաժամկետ:

2. **Ուսանողների ոչ բավարար տեղեկացվածությունը իրենց իրավունքների և ԲՈՒՀ-ի ներքին կանոնակարգերի մասին.**
   - Անհրաժեշտ է ԲՈՒՀ-ում կազմակերպել հանդիպումներ, իրազեկվածության օրեր ուսանողների համար, որպեսզի վերջիններս ծանոթանան իրենց իրավունքներին և առկա հնարավորություններին,
   - Հնարավորություն տալ ուսանողներին հանդիպումների և քննարկումների ընթացքում կարծիք հայտնել կանոնակարգերի և ֆինանսական աջակցության մեխանիզմների մասին,
   - Պետք է բարձրացնել ուսանողական խորհուրդների մասնակցությունը ուսանողների հետ կապված խնդիրները լուծելու հարցում: Մասնավորապես ուսանողական խորհուրդները կարող են ակտիվ դերակատարում ունենալ ֆինանսական աջակցության միջոցները բաշխելու հարցում:

3. **Ուսանողական նպաստների ոչ լիարժեք հասանելիությունը, այդպիսի իրավունք ունեցող ուսանողների համար.**
   - Անհրաժեշտ է բարձրացնել ուսանողների իրազեկվածությունը կարգերի վերաբերյալ,
   - Ձեղչերի վերաբերյալ որոշում կայացնող հանձնաժողովում ուսանողների մասնակցության ընդլայնում,
   - Առցանց հարթակների միջոցով կարգերի և դիմելու վերջնաժամկետների մասին իրազեկում,
   - Կայքէջերի պարբերական թարմացում: